Հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ակնալիճ
համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 16-ի
N 3-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Գ.Միսակյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2017թվականի 16հունվարի N 3_Ն_որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Ակնալիճ համայնք - 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....

3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....

4. ՀՋՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....

5. ՀՋՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....

6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

Ներածություն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի ընդունման նպատակն է՝ սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադրաձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի ռազմավարական զարգացման հնգամյա ծրագիրը այն փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, համայնքի ավագանու և բնակիչների հետ համատեղ կայացած քննարկումների արդյունքում, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների,

ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

Այն համայնքի կառավարման հետագա հինգ տարիների համար կհամարվի հիմնարար փաստաթուղթ , որում սահմանված են համայնքի զարգացման հիմնական ուղղությունները: Ակնալճի համայնքապետարանի նպատակն է՝ տեղեկացնել և ներգրավել գյուղի բնակչությանը ծրագրի իրականացման գործընթացներին և ծրագրի հաջողությունն ապահովելու համատեղ կատարման մթնոլորտ ստեղծել հանուն Ակնալիճ համայնքի բնակիչների բարօրության:

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Հարգելի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի բնակիչներ, ավագանի, համայնքապետարանի և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցներ:

Հայտնում եմ Շնորհակալություն, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման գործում աջակցության, քննարկումներին ակտիվ մասնակցության, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

ՀՀ Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

Ակնալիճ համայնքի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը առաջին հերթին ուղղված է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Վերջինիս նպատական է բազմակողմանի ու հանգամանալից քննարկումների արդյունքում վեր հանված համայնքային խնդիրներին հնարավորինս տալ լուծումներ՝ դրանիվ իսկ բարելավել համայնքում կյանքի որակը :

Համայնքի 2016-2021թթ հնգամյա ծրագրի նպատակներն են և նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ Համայնքի ֆինանսական վիճակի բարելավմամբ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացմամբ տնտեսության կայուն զարգացման խթանում, Կրթական , մշակութային, սպորտային կյանքի աշխուժացում, շրջակա միջավայրի պահպանություն և կանաչ տարածքների ավելացում, Բնակչությանը մատուցվող

համայնքային ծառայությունների որակի բարձրացում, ենթակառուցվածքների վերանորոգում, կատարելագործում, ներդրողների ներգրավման միջոցով գործազրկության մակարդակի նվազեցում և բնակչության կենսամակարդակի բարձրացում: :

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, մշակույթի տան, աշխատակազմերն ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

Համայնքի ղեկավար՝ Գևորգ Միսակյան

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ակնալիճը հանդիսանում է Արարատյան դաշտի հնագույն բնակավայրերից մեկը: Այդ են վկայում վերջերս պեղված նախնադարյան մի քանի բերդ շենքերը: Ակնալճից ոչ հեռու հայտնաբերվել են նաև երկաթի հնագույն ձուլարանի մնացորդներ: Տարածքում կատարված տարբեր պեղումների ժամանակ հայտնաբերվել են տարբեր գտածոներ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում, Էջմիածնի շրջանի հյուսիս-արևմուտքում, սահմանակից է հյուսիսից և հյուսիս - արևմուտքից Ֆերիկ և Արշալույս համայնքներին, հարավից և հարավ- արևելքից Տարոնիկ և Մայիսյան համայանքներին: Տարածությունը 17.4 քառ.կմ, գտնվում է ՈՒրց- կոտայք-Շամիրամ գոտում, միջին բարձրությունը ծովի մակերևույթից՝ 880մ, Մակերևույթը հարթ է, թույլ մասնատված, կազմված հրաբխային ապարներից: Գտնվում է 7-9բալանոց սեյսմիկ շրջանում: Գյուղի հատակագիծը հարմարեցված է բնական պայմաններին՝ կապված ռելեֆից: Հեռավորությունը մայրաքաղաքից 38 կմ է, մարզկենտրոնից 12կմ է, նախկին շրջկենտրոնից 18կմ: Համայնքի տարածքով անցնում է Երևան-Էջմիածին-Արմավիր հանրապետական ճանապարհը: 1950-ական թվականներին Հայկական ՍՍՀ մինստրների խորհուրդը որոշում կայացրեց հանրապետության մինչ այդ չօգտագործվող հողերը իրացնելու և այն գյուղատնտեսության մեջ օգտագործելու համար: Այգեգործության, պտղաբուծության և բանջարաբուծության հետագա զարգացումն ապահովելու նպատակով նոր իրացված հողերի վրա կազմավորվեցին հանրային տնտեսություններ: 1954 թվականի օգոստոսի 24-ին խամ ու խոպան, քարքարոտ ու ամայի հողերի վրա հիմնվեց Այղր-լճի այգեգործական տնտեսությունը: Արևմտյան Հայաստանի տարբեր գավառաներից լեռնային և

նախալեռնային շրջաններում հանգրվան գտած ընտանիքները 1950-ական թվականներից տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին նախկին Այղր-լիճ գյուղում, իրենց հետ բերելով իրենց բնակավայրերի լավագույն ավանդույթներն ու սովորությունները, որոնք միախառնվելով և միաձուլվելով Ակնալճի ավանդույթային կոլորիտը դարձրեցին էլ ավելի հարուստ և հետաքրքիր: Ակնալիճը փոքրիկ Հայաստան է Հայաստանի մեջ, հյուրընկալ ու մշակութային ավանդույթների գյուղ է, որը հայտնի է իր համեղ խաղողով, ծիրանով: Համայնքի բնակիչների հիմնական մասը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ են: Համայնքը ունի տիպային և այժմ արդեն խիստ վերանորոգման կարիք զգացող մշակույթի տուն, մշակույթի տան մի հատվածում գործող գրադարան և հանդիսությունների սգո արարողությունների սրահ, դպրոց՝ սպորտ դահլիճով, համայնքապետարան, մանկապարտեզ, փոստ, պետության և համայնքի համաֆինանսավորմամբ նոր կառուցված բուժ. ամբուլատորիա:

***Ժողովրդագրություն* և սոցիալական կազմ**

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը	**3303**
1.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	**10**
1.2	կիսակառույց տներում բնակվող	**2**
2.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	**114**

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (2016թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	**3300**	**1654**	**1646**
	մինչև 1 տարեկան	**43**	**20**	**23**
	1-2 տարեկան	**43**	**20**	**23**
	3-4 տարեկան	**87**	**41**	**46**
	5-6 տարեկան	**78**	**42**	**36**
	7-10 տարեկան	**175**	**75**	**100**

	11-14 տարեկան	174	71	103
	15-17 տարեկան	131	53	78
	18 և ավելի տարեկան	2569	1332	1237
	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	315	116	199
	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	13	9	4
	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ			
	Հաշմանդամ երեխաներ	8	1	7
	Հաշմանդամներ	63	25	38
	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	114		
	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	18		18

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

2.2.Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ. տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները հաշվարկել է 85094.0 ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ՝ սեփական եկամուտները 10781.2 ՀՀ դրամ կամ 12%:

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների մասին տեղեկություններ .

/հազ.դրամ/

	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		պլան	կատարող.
1.	Հողի հարկ	4759.1	2472.6
2.	Գույքահարկ	4528.1	4549.5
3.	Տեղական տուրք	114.0	116.3
4.	Տեղական վճար	0	
5.	Հողի վարձակալության վճար	920.0	627.3
6.	Գույքի վարձակալության վճար	120.0	40.0

7.	Ծառայությունների մատ. վճարներ	340.0	549.6.1
8.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	58957.7	58957.7
9.	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյոջեին տրամադրվող այլ դոտացիա	241.1	241.1
10.	Տարեսկզբի ազատ մնացորդ	15114.0	15114.0
11.	Հողի օտարումից եկամուտ	0	375.0
	Ընդամենը	**85094.0**	**83043.6**

Համայնքի 2016թ բյուջեի ծախսերի մասին տեղեկություններ .

h/h	Հիմնարկներ	Տարեկան	
		պլան	կատարող.
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	31300.0	27519.0
2	Հանգիստ,մշակույթ և կրոն	8580.0	7733.5
3	Սոցիալական պաշտպանություն	6600.0	6500.0
4	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	5500.0	5174.8
5	Նախադպրոցական կրթություն	7500.0	7125.0
6	աղբահանում	2700.0	2293.0
7	պահուստային ֆոնդ	7800.0	7800.0
8	տրանսպ.միջոցի ձ.բ.	8000.0	7865.0
9	Վարչական սարքավորումներ	555.0	554.5
11	Կապիտալ նորոգումների ծախսեր	13332.9	13332.1
12	այլ հիմնական միջոցներ	414.0	250.0
13	պաշարներ	612.0	548.0
14	վարչ.բյջ.պահ.ֆ.հատկ.ֆոնդ.բյ.	7800.0	7800.0
	ընդամենը	85094.0	78519.2

Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ Համայնքում զարգացած գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են՝

1. խաղողի այգիներ
2. պտղատու այգիներ
3. բանջարաբուծություն

Գյուղատնտեսական արտանդրանքի վաճառքը իրականացվում է տեղում և մթերող կազմակերպությունների միջոցով:

առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների
ընդհանուր թիվը կազմում է 7,
Գյուղմթերքների բացօթյա առևտուրը ենթակա է կանոնակարգման:

Հիմնախնդիրներ՝

" համայնքում գործող գյուղմթերքների շուկայի բացակայություն
" չկանոնակարգված բացօթյա առևտուր.

Քաղաքաշինություն և *Հողօգտագործում*

հեկտար

	Ընդամենը	Համայնքում առկա	Պետական	Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն	Ոռոգելի հողեր	Փաստացի ոռոգվող հողեր
Համայնքի վարչական տարածքը	1752.91	751.91	17.37	983.63	x	x
Գյուղատնտեսական նշանակության հողեր	**1590.75**	704.87	0	885.8787	1028.6	
Պահուստային հողեր	-	-	-	-	x	x
Բնակելի շինությունների տակ հողեր	136.3	40.4	2.1	93.8	x	x
Արդյունաբերական արտադրական շինությունների տակ հողեր	3.9	0	0	3.9	x	x
Ընդերքօգտագործման հողեր					x	x
Ճանապարհների տակ հողեր	6.4	0	6.35	0	x	X
Առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր	4.71	4.71	0	0	x	X
Անտառային հողեր	1.4	0	1.44	0	x	X
Ջրային ֆոնդի հողեր	8.6	1.11	7.51	0	x	X

Հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ					x	X
Համայնքի այլ հողեր	0.8	0.8	0	0	x	X

համայնքը ձևավորվել է 1950-ական թվականներին և այն հարուստ չէ պատմամշակութային ժառանգությամբ: Համայնքի տարածքում կա եզդիների եկեղեցի, և 2015թվականին բնակչության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ սկիզբ դրվեց հայկական եկեղեցու կառուցման աշխատանքներին, Համայնքը ունի հանգստի գոտի՝ Ակնալճի մշակույթի տան շրջակայքում կա եղբայրական գերեզմանոց, որտեղ ամփոփված են Արցախյան ազատամարտին զոհված տղաների դիերը և որոնց հիշատակը հավերժացնելու նպատակով դրված է խաչքար, հուշարձան:Համայնքում զբոսաշրջության հետաքրքրություն ներկայացնող բնական պատմական և մշակութային հուշարձաններ չկան: Ակնալիճ համայնքում առկա է դամբարանադաշտ, որը գրանցված է հուշարձանների պահպանության Հայաստանյան մատյաններում: Համայնքում առկա են վթարային բազմաբնակարան շենքեր, որոնք պահանջում են հրատապ լուծում:

Հիմնախնդիրներ՝

" համայնքի գլխավոր հատակագծի բացակայություն.

" ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ իրավիճակ.

" վթարված բազմաբնակարան շենքերի առկայություն.

Կրթություն

Համայնքում գործում են կրթական հաստատություններ, որից՝

1 եռահարկ միջնակարգ դպրոց ՝ ներկայումս ունի 437 աշակերտ նախատեսված է 680 աշակերտի համար, ուսուցչական կոլեկտիվը բաղկացած 35 հոգուց:

Վերը նշված հաստատությունը հանդիսանում է հանրապետական և մարզային ենթակայության կառույց:

1 համայնքային ենթակայության մանկապարտեզ, նախատեսված է 120 սանի համար, գործում է մեկ խումբ, հաճախում են 35 երեխա: Աշխատում են 7 աշխատակից, որից մանկավարժներ՝ 3-ը

Ավագանու որոշումով հաստատվել է համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաներին ծնողական վճարների սահմանված չափի նկատմամբ զեղչեր կիրառելու դեպքերը:

Հիմնախնդիրներ՝

" մանկապարտեզի շենքի մաշվածության բարձր աստիճան.

" գույքի մաշվածություն.

" մանկապարտեզի ջեռուցման համակարգի բացակայություն.

" մանկապարտեզի բակի բարեկարգման և խաղահրապարակի թարմացման կարիք.

Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում է համայնքային ենթակայության թվով 1առողջապահական կազմակերպություն՝ բուժ.ամբուլատորիա 7 աշխատատեղով, նախատեսված է օրական 25-30 մարդու սպասարկման համար:

Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Համայնքում գործում է 1 գրադարան 2016թ.-ին գրադարանում առկա գրքերի քանակը կազմում է 6500 կտոր:
Համայնքում գործում է երաժշտական խմբակ՝ /դաշնամուրի/ 7աշակերտով:
համայնքում 17-30 տարեկան երիտասարդները կազմում են բնակչության մոտ %-ը:
Աշխատատեղերի բացակայության պատճառով նրանց մի մասը ստիպված բռնում է արտագաղթի ճանապարհը և ինքնահաստատվում օտար երկրներում:
Երիտասարդների համար աշխատատեղեր ստեղծելու համար համայնքապետարանը չունի հնարավորություն:

Հիմնախնդիրներ՝

" ժամանակակից ընթերցողական գրականության կարիք.
" տեղեկատվական տեխնոլոգիաների բացակայություն
" մշակութային շենքի մաշվածություն.
" ջերմային ռեժիմի պահպանման դժվարություն.
" մշակութային հաստատությունների ջեռուցման համակարգերի ներդրման կարիք.
" երիտասարդների համար աշխատատեղերի բացակայություն.

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համայնքի ավագանու անդամների թիվը - 9
համայնքի ղեկավարի աշխատակազմում ընդգրկված են՝

1. Համայնքի ղեկավար 1
2. հայեցողական պաշտոն - 1 /համայնքի ղեկավարի տեղակալ/
3. համայնքային ծառայողներ - 6
4. տեխնիկական սպասարկում իրականացնողներ- 4

համայնքում գործում են համայնքային ենթակայության թվով 2 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ 14 աշխատատեղով: Այդ ՀՈԱԿ-ների անվանումները և աշխատակիցների թիվը կներկայացվի ըստ ոլորտների:
Համայնքային ծառայությունն առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝
" կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծության և բացարձակ թափանցիկության աշխատանքային միջավայր,
" ավագանու նիստերի ընթացքում լսել ՀՈԱԿ-ների տնօրենների հաշվետվությունները,
" համայնքային աշխատողների պարբերական վերապատրաստումներ՝ փոխանակման և փորձի փոխանակման ծրագրեր,
" թարմացնել համայնքապետարանի կայքը՝ բնակչության հետ կապը դարձնելով առավել արդյունավետ,

«Մալբերի» համակարգի միջոցով աշխատակազմի աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ հասնել ավելի արագ և որակյալ համայնքային ծառայության մատուցմանը,

" սեփական ռեսուրսներով մատուցվող ծառայությունների մշակում և սպասարկում,

" ավագանու նիստերին ՝ ապահովել բնակիչների մասնակցությունը իրենց հուզող հարցերի քննարկմանը:

Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն
Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ոչ ապահովված գոտում: Ջրամատակարարման համակարգերը կառավարվում է ,,Նոր-Ակունք,, ՓԲԸ-ի կողմից: Ջրամատակարարման համար օգտագործվում է խորքային հոր, ջրամատակարարման համակարգի գործող օրվա կարգավորիչ ջրամբարի միջոցով, ջրերի վարակազերծումը կատարվում է քլորի միջոցով: Խմելու ջրի որակի ապահովվածությունը անբարենպաստ է, անբարենպաստ է նաև գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցի տեխնիկական վիճակը: Բացակայում է ջրահեռացման ցանցը, տեղանքի ռելիեֆային պայմանները թույլ են տալիս կատարել ինքնահոս հեռացում:

Հիմնախնդիրներ՝

" ջրային կառույցների քայքայված և մաշված վիճակ
ջրահեռացման ցանցի բացակայություն

Էներգամատակարարում

Համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլ.ցանցեր ընկերության կողմից:

Համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազպրոմ – Արմենիա» ընկերության կողմից 2016 թվականի դրությամբ գազաֆիկացվել է 350 տնտեսություն:

Արտաքին լուսավորություն

2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ լուսավորվող փողոցների թիվը կազմել է 40%

Հիմնախնդիրներ՝ արտաքին լուսավորության լուսակետերի և լուսավորության ցանցի անբավարար քանակ

Փողոցներ

Ճանապարհները նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշտական աշխատանքների իրականացումն է:

Կարևոր հանգամանք է ճանապարհների փոսալցման և խճապատման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ասֆալտապատման աշխատանքները:

2016թվականին համայնքում իրականացվել են ասֆալտապատման աշխատանքներ և 2017թ. ճանապարհաշինության և ասֆալտապատման

բնագավառում կներդրվեն աշխատանքների իրականացման բովանդակությամբ նոր պայմանագրեր:

Հիմնախնդիրներ՝

" համայնքի փողոցների անբարեկարգ վիճակ.

" սայլակների համար թեքահարթակների բացակայություն.

Աղբահանություն, սանիտարական մաքրում

Համայնքում կատարվում է շուրջօրյա աղբահանության աշխատանքները կազմակերպվում են համայնքի բյուջեի միջոցներով: Պարբերաբար կազմակերպվում է փողոցների, մայթերի, եզրաքարերի երկարությամբ սանիտարական մաքրման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ՝

" շահագործվող հատուկ նշանակության մեքենա -մեխանիզմների և աղբամանների բացակայություն

" համայնքի տարբեր հատվածներում աղբի մեծ կուտակումների առկայություն և չնախատեսված վայրերում աղբանետումներ.

Բնակտնտեսություն

Համայնքի բազմաբնակարան շենքերի թիվը – 14 /որից՝ 7հատ երկհարկանի 8բնակարանով և 7 հատ եռահարկ 24բնակարանով/ բնակֆոնդի ընդհանուր և բնակելի մակերեսները 40000 քմ,

բնակելի տներ - 370

բազմաբնակարան վթարային բնակելի շենքեր – 1/գրանցված/

Լուրջ մտածելու տեղիք է տալիս նաև համայնքի բազմաբնակարան շենքերի ջրամատակարարումը և ջրահեռացումը քանի որ շենքերի ընդհանուր օգտագործման ջրագծերը ամբողջովին քայքայված են:

Վատ վիճակում են գտնվում շենքերի տանիքները, առաջնահերթ վերանորոգման կարիք ունեն բազմաբնակարան շենքերի տանիքները, որի աշխատանքները ինչպես նախորդ քառամյակում, այնպես էլ առաջիկա հնգամյակում կիրականացվի համայնքապետարանի կողմից, սակայն համայնքը իր միջոցներով ի զորու չէ առաջիկա տարիներին ավարտին հասցնելու , ուստի անհրաժեշտ է ընդգրկվել համապատասխան ծրագրերում:

Բարեկարգման կարիք ունեն բակային տարածքները. կա խաղահրապարակներ կառուցելու կարիք:

Համայնքում կան կիսակառույց առանձնատներ: Մեծ է բնակարանների կարիք ունեցող ընտանիքների թիվը, որոնց քանակը տարեցտարի աճում է, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամասեր, սակայն ֆինանսական վատ պայմանների պատճառով չեն կարողանում կառուցել բնակարաններ, որը հանդիսանում է հիմնական պատճառներից մեկը արտագաղթելու:

Հիմնախնդիրներ՝

" բազմաբնակարան շենքերի տանիքների անմխիթար վիճակ.

" մաշված և վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն.

" բակային տարածքների անբարեկարգ վիճակ.

" խաղահրապարակների բացակայություն.

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Համայնքն ու նրան հարող տարածքները գտնվում են տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Համայնքով է անցնում Երևան-Արմավիր հանրապետական նշանակության ճանապարհը: Համայնքը շրջակա բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:

Հիմնախնդիրներ՝

-կանգառներում տաղավարների ոչ բավարար քանակ

2.3.Համայնքում իրականացվող ծրագրեր

Ցանկալի է Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրում, որը խթան կհանդիսանա համայնքի զարգացման համար

1.Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահպանման /սառնարանային/ արտադրամասեր:

2.Ջրահեռացման ցանցի անցկացում

Համայնքը պատրաստակամ է գալիք հինգ տարիներին հարևան համայնքների հետ համատեղ միջհամայնքային համգործակցության

Համայնքում իրականացվում են ծրագրեր համայնքապետարանի կողմից՝

1.Մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգում

2.Արտաքին լուսավորության ցանցի անցկացում

3.ներհամայնքային փողոցների ասֆալտապատում և ընթացիկ նորոգում

4.բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

5.Հուշարձանի տարածքի բարեկարգում

6.Ենթակառուցվածքների մասնակի վերանորոգումներ

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին:

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն

համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 3. Համայնքի 2016թ. բյուջեի մուտքերի փաստացի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հազ.դրամ

հ/հ	Եկամուտների տեսակը	2016 փաստացի	2017 նախատեսված	2018 նախատեսված	2019 նախատեսված	2020 նախատեսված	2021 նախատեսված
1.	Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	67554.1	71500.0	71890.0	73200.0	74410.0	75620.0
2	Եկամուտներ	7564.9	11754.8	11890.0	12200.0	12410.0	12620.0
2.1	Ընթացիկ եկամուտներ	7138.4	9914.8	10030.0	10330.0	10530.0	10730.0
1.	Հարկային եկամուտներ	7022.1	9484.8	9600.0	9900.0	10100.0	10300.0
1.1	Հողի հարկ	2472.6	4914.8	5000.0	5200.0	5300.0	5400.0
1.2	Գույքահարկ	4549.5	4570.0	4600.0	4700.0	4800.0	4900.0
1.3	Եկամտահարկ	-	-	-	-	-	-
1.4	Այլ հարկային եկամուտներ						
2	Տուրքեր	116.3	430.0	430.0	430.0	430.0	430.0
2.1	Պետական տուրքեր						
2.2	Տեղական տուրքեր	116.3	430.0	430.0	430.0	430.0	430.0
3	Ոչ հարկային եկամուտներ	1216.9	1840.0	1860.0	1870.0	1880.0	1890.0
3.1	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ	627.3	920.0	920.0	920.0	920.0	920.0
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ	40.0	120.0	120.0	120.0	120.0	120.0
3.3	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ						
3.4	Տեղական վճարներ	549.6	800.0	800.0	800.0	800.0	800.0
3.5	Այլ ոչ հարկային	-	20.0	30.0	40.0	50.0	60.0

	եկամուտներ						
	Եկամուտի կապիտալի գործառնություններից						
	Պաշտոնական տրանսֆերտներ	59198.8	59745.2	60000.0	61000.0	62000.0	63000.0
	Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ դոտացիա/						
	Պաշտոնական կապիտալից տրանսֆերտներ դոտացիա/		-	-	-	-	-

2.5.Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն նախադպրոցական հիմնարկը, մշակույթի տունը, համայնքապետարանի շենքը, ճանապարհները.

- գործազրկություն, սոցիալապես անապահով աղքատ բնակչություն, ցածր աշխատավարձի առկայություն
- խմելաջրի ցացի անմխիթար վիճակ
- ոռոգման համակարգի անմխիթար վիճակ, գերնորմատիվային հողեր, Համայնքում առկա են գյուղատնտեսական նշանակության տասնյակ հեկտարներով վարելահողեր, որոնք ոռոգման ջրի լիարժեք առկայության դեպքում կմշակվեին և համայնքում կբացվեր նոր աշխատետեղեր՝ կբարելավվել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը:
- Գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրը դժվարություններ է առաջացրել համայնքի բյուջե մուտքաբրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործընթացում:

Համայնքի նախկին բուժ.ամբուլատորիայի վթարային մեկ հարկանի մասնաշենքի հիմքերը լիովին քայքայված են ներքին հոսող ջրերի պատճառով, սակայն կապիտալ վերանորոգման արդյունքում այն հնարավոր է օգտագործել որպես արվեստի կամ սպորտ դպրոց, որում կընդգրկվեին աշակերտներ, կզարգանար կուլտուրան, մշակույթը,սպորտը և կբացվեր նոր աշխատատեղեր:

Համայնքի մշակույթի տանը լոկալ ջեռուցման համակարգ անցկացված չէ, որը սպորտին, մշակույթին վերաբերվող միջոցառումների լիակատար և որակով /նաև ձմռան ամիսներին/ անցկացնելու նպատակով՝ խիստ անհրաժեշտություն է:

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանություն գործընթացը, ավելի նպատակային, կազմակերպելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար՝ համայնքի ընտանիքներում յուրաքանչյուր ծնվածների, մահացածների, հիվանդությունների դեպքում կցուցաբերվեր դրամական օգնություն: Հենաշարժական խնդիրներ ունեցող բնակիչներին համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովելու համար ունենալ միջոցներ: Համայնքում ուսումնական հաստատությունների, խանութների, բուժ ամբուլատորիայի, մշակույթի տան, հասարակական օբյեկտների մուտքերը հարմարեցնել հաշմանդամության սայլակներին համապատասխան:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու

քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիկա և տրանսպորտային միջոցներ:

Ոռոգման ջրատարի ներհամայնքային համակարգի մի մասը բետոնյա կիսախողովակներ են, մյուս մասը՝ հողային հունով առուներ, որի պատճառով ունենում ենք ոռոգման ջրի կորուստ, հետևապես ստացվում է մշակաբույսերի անարդյունավետ աճեցում, բերքատվության կորուստ:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում: Շատ այժմեական է եկեղեցիաշինության գործին բարեգործների մասնակցությունը:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Համայնքի աշխարհագրական դիրքը/մայրուղուն մոտ լինելը / 2.Զվարթնոց օդանավակայանին մոտ 3.Գյուղական հանգիստ ապահով միջավայր 4. խանութների առկայությունը, նրանց արդյունավետ աշխատանքը 5.Որակյալ աշխատուժ 6.ենթակառուցվածքների բավարար առկայություն/ գազ,ջուր.հոսանք/ 7.խմելու և ոռոգման ջրի բավարար առկայություն 8.հուսալի հաղորդակցություն Երևանի և հարավային մարզերի հետ 9.Ակտիվ և թափանցիկ գործող և բնակչության վստահությունը վայելող ՏԻՄ 10.ՀԱԷԿ-ին կից լինելը/աշխատատեղերի առումով/	1.ՀԱԷԿ-ին հարակից լինելը 2.կոյուղու խնդիր 3.գերնորմատիվային հողերի առկայություն 4.Զբաղվածության ցածր և աղքատության բարձր մակարդակ 5.Արտադրողներին իրենց արտադրանքը շուկա հանելու հարցում ինստուտցիոնալ աջակցության բացակայություն 6.1960-ական թվականների կառուցված բազմաբնակարան շենքերի/եռահարկ/ վթարային վիճակ 7.Արտագաղթ 8.Համայնքում կանաչ գոտիների պակասը 9.Իրականացվող երիտասարդական ծրագրերի պակասը ժամանցի վայրերի պակաս 10.Հողի հարկի գանձումների դժվարություն կապված բնակիչների անվճարունակութուն հետ 11.Փողոցների ասֆալտապատում,վերանորոգում
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
1.Խաղողագործության, պտղաբուծության զարգացում, արտադրություն 2.գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում 3.Ջերմոցային տնտեսության զարգացում	1.Բնակլիմայական պայմանները՝ ա/ գլոբալ տաքացումը բ/ երաշտը գ/ ցրտահարությունը դ/ կարկտահարությունը

	2.ՀԱԷԿ-ի տեխնածին վտանգ 3.Բնակչության արտագաղթը

3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Ակնալճի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայրը:

2017-2021 թվականներին Ակնալիճը կլինի բարելավված և բարեկարգ համայնք, ՀԱԷԿ-ի կառուցման ծրագրի իրագործման և օտարերկրյա ներդրողների արտադրության կազմակերպման, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման մինի արտադրամասերի շահագործման , համայնքային, պետական ներդրումների արդյունքում կավելանան աշխատատեղերը, կկրճատվի արտագաղթի ճանապարհ բռնած ընտանիքների թիվը, կստեղծվի ապահով գյուղական միջավայր իր բնակիչների համար :

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	20	15	13	10	9
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	0.1%	0.5%	1.0 %	1.5 %	1.5%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0.8%	1.0%	1.3%	1.6%	2.0%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Համայնքում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ
- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը.
- ապահովել համայնքի նախադպրոցական, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների շենքերի հիմնական վերանորոգման, ջեռուցման, ջրամատակարարման վերականգնման և գույքի ձեռք բերման աշխատանքներ
- համայնքում պայմաններ ստեղծել՝ զարգացնելու փոքր և միջին բիզնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները

- համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում
- բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները
- համայնքում իրականացնել բարեկարգման և կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ
- համայնքի ճանապարհների հիմնանորոգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ **Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահպանման /սառնարանային/ արտադրամասի կառուցում:**
- ✓ **Ջրահեռացման ցանցի կապիտալ անցկացում**
- ✓ **Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում և ասֆալտապատում**
- ✓ **Համայնքի արտաքին լուսավորության ցանցի անցկացում**
- ✓ **Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապահների և փողոցների բարեկարգում, փոսալցում**
- ✓ **Կանգառների պատրաստում, տեղադրում**
- ✓ **Աջակցություն խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը**
- ✓ **Աջակցություն ոռոգման ջրատարի վերանորոգմանը**
- ✓ **Համայնքի մշակույթի տան վերանորոգում կահավորում և ջեռուցման համակարգի անցկացում**
- ✓ **Մանկապարտեզի շենքի վերանորոգում**
- ✓ **Հուշարձանի տարածքի բարեկարգում**
- ✓ **գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի կազմում**

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահպանման /սառնարանային/ արտադրամասի կառուցում:

(Ծրագրի անվանում

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահպանման /սառնարանային/ արտադրամասի կառուցում:**						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-		25000.0	25000 .0	25000. 0	25000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				10 000.0	10 000.0	10 000.0	10 000.0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				15000.0	15000.0	15000.0	15000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. շինանյութի ձեռքբերում 1.2. տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. աշխատուժ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր ՝ 30 000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 70 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 100 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	**Գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահպանման /սառնարանային/ արտադրամասի կառուցում:**						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի 15% համաֆինանսավորմամբ և պետության կողմից ակնկալվող աջակցությամբ կբարելավվի համայնքի տնտեսությունների կենսամակարդակը, գյուղացին կտնտեսի ֆինանսական միջոցներ և ժամանակ ավել արտադրանք արտադրելու համար, բացի այդ կստեղծվեն նոր աշխատատեղեր						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2

«Ջրահեռացման ցանցի կապիտալ անցկացում »

(Ծրագրի անվանում

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ջրահեռացման ցանցի կապիտալ անցկացում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետայ ին արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-		25000.0	25000 .0	25000. 0	25000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետ ային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				10 000.0	10 000.0	10 000.0	10 000.0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետ ային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
				15000.0	15000.0	15000.0	15000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. կոյուղու համար նախատեսված խողովակների ձեռք բերում 1.2. տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. աշխատուժ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 30 000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 70 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 100 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ջրահեռացման ցանցի կապիտալ անցկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի 15% համաֆինանսավորմամբ և պետության կողմից ակնկալվող աջակցությամբ կբարելավվի համայնքի տնտեսությունների կենսամակարդակը, բնակիչները ստիպված չեն լինի ոռոգման համար նախատեսված կիսախողովակները օգտագործել ջրահեռացման նպատակով, կվերանա համաճարակային երևույթների ռիսկը և խալխուլ կիսախողովակներից կեղտաջրերի արտահոսքը հարակից շենքերի հիմքեր:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3

« փողոցներիև ճանապարհների հիմնանորոգում և ասֆալտապատում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	փողոցների ասֆալտապատում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	10 000.0	10 000.0	10 000.0	10 000.0	10 000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			4000.0	4000.0	4000.0	4000 .0	4000.0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			6000.0	6000.0	6000.0	6000.0	6000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձյութի, մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 20 000.0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 30 000.0 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 50 000.0 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	փողոցների ասֆալտապատում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապահների և փողոցների փոսալցման , ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները, դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 4

« գիշերային լուսավորության անցկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետ ային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	600 000	600 000	600 000	600 000	600 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետ ային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետ ային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	400 000	400 000	400 000	400 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Սյուների, լամպերի ձեռք բերում 1.2. Լարերի,մալուխների ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Մոնտաժման աշխատանքներ 2.2. Անցկացված լուսավորության փորձարկում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր ՝ 1 000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 2 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում թաղամասերի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության անցկացման արդյունքում գյուղի փողոցները կլուսավորվեն, կակտիվանա, կհեշտանա բնակչության տեղաշարժը գիշերային ժամերին, գույքի պահպանությունը կբարելավվի, կբարձրանա բնակչության տրամադրությունը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 5

«Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապահների և փողոցների բարեկարգում և փոսալցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապահների և փողոցների բարեկարգում, փոսալցում						
Ծրագրի անմիջական նպատակ							
